

ՀԱՅ ԿԵԱՆՔ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ

ՀԱՅԵՐԻ ԲՆԱԶՆՁՈՒՄԸ.*)

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԵԴՕԹ.—ԹԻԻՐՔԱԿԱՆ ԳՈՐԾ.

Համագերմանականութեան վարդապետութեան վերլուծութիւնը, որ կատարուած է հանդիսիս մէջ, ծանօթ է մեր ընթերցողներին. այդ վերլուծութիւնը պատկանում է պ. Էմբար դը-լա Դուրի (Imbart de la Tour) գօրեղ, սքանչելի ճարտարաբանութեամբ օժտուած գրչին: Պետութեան ամբողջութիւնն ու պահպանութիւնը լինելով միայն ամենաէական օրէնքը, ոչ մի հակադրութիւն չէ ենթադրուած քաղաքականութեան և բարոյագիտութեան մէջ: Նախախնամութիւնից մասնացոյց եղած ժողովրդի նկատմամբ «այլ ազգերի և ժողովրդների կամքը ոչ մի իրաւունք չէ ներկայացնում»: Գերմանական ազգը ընտրուած լինելով նոյն իսկ Աստուծոյ աշխարհը տիրապետելու և նորան մի

*) Յօդուածս, որ լոյս է տեսել Revue des Deux Mondes-ի տ. փետր 1-ի համարում, թէև չէ կրում հեղինակի անունը, որ շատացել է միայն երեք աստղանիշների տակ մտնելով, պատկանում է Հայաստանի դրութեան քաջ ծանօթ և մեր դատի պաշտպան հանրածանօթ պ. Մ. Բընէ Բինօնի գրչին, որի մանրամասնութիւնները և տեղեկութիւնները ընձեռուած են նորան հայազգի բարձրաստիճան և հեղինակաւոր մի անձի կողմից, որ այժմ Եւրոպայ է ապրում: Նոյն անձը ևրոպական կարծիքը հայկական դատին նպաստաւոր հոսանքի տանելու համար թարգմանել է տուել անգլիերէնից Ֆրանսերէն երկու տետր ևս,—Rapport du Comité Americain de New-York sur les Atrocités commises en Arménie և Les Derniers Massacres d'Arménie, որ պատկանում է անգլիացի Herbert Adams Gibbons-ի գրչին:—Սոցա բովանդակութիւնը յայտնի է անգլիական հասարակութեան: Լօնդոնի Ararat-ի էջերն ևս զբաղուեցաւ այս գրքոյկների բովանդակութեամբ:

ՄԵ. Լ. Բ.

վերնագոյն ձև և քաղաքականութիւն տալու համար, նորան պատուաստելու իւր «kultur»-ը, այն ամէնն ինչ որ արգելք կարող է հանդիսանալ իւր տիրապետութեան յառաջագիմութեան երկնողի և Մարդկայնութեան բարեբաղդութեան դարբնողի համար,—այդ ամենը ոչնչացման է դատապարտուած. և այն, ինչ որ կարող է շտապեցնել այդ երևոյթի յառաջացումը, ըստ ինքեան, արդարացի է և բարեբաստիկ, —դա ինքը Բարին է: Միւս կողմից, միթէ անկար և անընդունակ ազգերն, ըստ ինքեան, դատապարտուած չեն, և միթէ մի բարձրագոյն կարգի աշխատակցութիւն չէ գործակցել բնութեան, որ նա բարին գտելու և խոտանը դուրս ձգելու իւր գործը գլուխ բերէ: Մարդկայնութիւնը, դէպի գերագոյն վիճակի դիմելու իւր ընթացքի ժամանակ՝ անկարող է կանգ առնել աւելի թոյլ ազգերի և անհատների առաջ, որոնց նա ոտնատակ է տալիս անցնում, առանց նոյն իսկ նոցա վերայ ակնարկ ձգելու պատուին արժանացնելու: Եւ ինչեր չեն զոհաբերել նոքա իրենց համար, ինչպէս Հնդիկներն իրենց Ջագերնոտին՝ միստիքական, վերին պաշտամունքի և սիրոյ թափի տակ: Այդպիսիների ոչնչացումը՝ պատմութեան նպատակն է, վերին աստուածութեան ծրագիրն է: Գթասրտութիւնը միմիայն խաբէութիւն է և թուլութեան նշան. ասպարէզը ուժեղներին է, ասպարէզը «վերնագոյն» Գերմանիայինն է:

Ահա այդ վարդապետութեան էութիւնը: Այսպիսի առ երևոյթ իմաստասիրական տեսութեամբ է քողարկում գերմանական գիտութիւնը գերմանական ժողովրդից իւր ներկայ պատմութեան արիւնալի իրականութիւնը: Բնագզումների վայրենի կոպտութիւնը, տիրապետելու ծարաւը յագեցնելու շղթաների խորտակումը, բարեպատեհ անգթութեամբ արտօնում են աշխարհակալական և օտարներին նուաճելու տեսական սկզբունքները և նոյն իսկ պարծենում են, որ նոցա իրականացնելուն են ծառայում: Իսկ այդ բոլոր տեսական սկզբունքների յետևը, կարող կլինենք գտնել, թերևս, վերջնական վերլուծմամբ, վաճառելու, հարստանալու և գործեր շտկելու ազան և սուր կարիքի

ամենապարզ իրականութիւնը: Գերմանական նուաճողական աշխարհակալութիւնը, իւր այժմեան ձևով, ամենից առաջ մի վաճառականական, չարչիական խնդիր է:

Ծառը իւր պտղից է ճանաչուած և վարդապետութեան արժէքը իւր հետեանքներով է գնահատուած: Կեղծ մարգարէների ամենառաջին պատիժը՝ իրենց աշակերտ ու հետևողներն են, որոնք ամեն չափ ու սահման սուքի տակ տալով, սկզբունքների ամբողջ դառնութիւնը և ուսուցման թագնուած թոյնն են երևան հանում, դատապարտութեան մատնելով նոցա և խորտակելով ու աւերածի վերածելով այն չափով, որչափ իրականանում են նոքա կեանքի մէջ: Գերմանական քաղաքականութիւնը և պատերազմի կերպը՝ գերմանական առևտրական ձեռնարկութեան վտանգաւոր վարդապետութիւնների իրականացող գործողութիւնների վերածուելուն է յանգում: Բեղլիայի և Ֆրանսիայի կոտորածների հեղինակները շատ վատ ծառայութիւն են մատուցել գերմանական շահերին՝ գործնական ձեռնարկութեան նսպատակը շատ շուտ ի ցոյց դնելով: Սակայն Վիլհելմ կայսեր զինուորներն այնպիսի աշակերտներ են դաել, որ իրենցից ևս անցան: Թիւրքերը, որոնց ձեռքով կատարուեցան Հայաստանի խժգժութիւնները իրենց ուսուցիչների՝ գերմանացիների առանց այն պատասխանատուութեան տակ ճնշուած ուսերի վերայ արիւնոտ պատասխանատուութեան մի զարհուրելի բեռ ևս աւելացրին, որովհետև եթէ գործողները տաճիկ ձեռքերն էին, սակայն գործելու եղանակը, մեթոդը՝ գերմանական էր:

Ա.

Գերմանիայի բարոյական պատասխանատուութեան խնդիրը կասկածից դուրս է: Երբ որ կգտնուին այնպիսի տեսականագէտներ, որ մահուան վարդապետութիւնը կարող են երկնել, միշտ կգտնուեն հետևողական և վարդապետութիւնը պարզութեան վերածող ոգիներ՝ այդ նոյնը գործնականի վերածելու համար. այդպիսի ժամանակ ուսուցիչը աշակերտի արածների պատասխանատուն է: Բեղլիայի կո-

տորածների և Հայկական ջարդերի մէջ միմիայն աստիճանակարգութեան տարբերութիւն կայ և ոչ էութեան:

Գերմանացիները համար քաղաքական շահի խնդիր էր Հայերի անհետացումը: Երկար տարիներից ի վեր, որոշ եղանակաւոր կարգաւորութեամբ և հետևողականութեամբ, որից զուրկ են եղել նոցա հակառակորդները, նոքա հետևել են և նպատակ դրել, որ Տաճկաստանն իրենց ծաւալման ու արտագեղման մի ընդարձակ վայր և գերմանական գաղութի իշխանութիւն դարձնեն: Քաղաքական և տնտեսական տիրապետութեան այս ընդարձակ ծրագիրը հետզհետէ զարգացել և ճշգրտուել է, քանի որ Անատոլիայի և հիւսիսային Սիրիայի միջով Բաղդատի երկաթուղու գիծն առաջ է գնացել՝ իբրև մի նոր ողնաշար անողնայար Տաճիկ կայսրութեան: Որքան Տաճկաստանն ընդարձակ կլինի, որչափ նորա յաւակնութիւններն հեռու կտարածուեն, այնչափ և նորա դայեակ ու ժառանգ Գերմանիան ուժեղ և հարուստ կլինի, այնչափ և իւր կայսերական երկաթուղիների հպելիքները հեռու կտարածուեն: Պարսկաստանը, Կովկասը, Եգիպտոսը, Արաբիան՝ պէտք է Օսմանեան կայսրութեան յարակից մասերը դառնան, որպէսզի այդ բոլոր երկիրներն ևս Գերման կայսրութեան աւատական թևարկեալ հպատակները լինեն: Գերմանիան, մեծ պատերազմից իսկ շատ առաջ Տաճիկների Պարսկաստանի դէմ ունեցած ոտնձգութիւններն էր քաջալերում, նախ Ադրբեջանում, և ապա հարաւում՝ Արտըլանում և Լուրիստանում. խթանում և ոյժ էր տալիս Երիտասարդ-թիւրքերի Եգիպտոսի նկատմամբ ունեցած յաւակնութիւնները և թունաւորում նոցա դժկամակութիւնները: Բերլինը ներշնչում և ուղղութիւն էր տալիս Դուան ամբողջ քաղաքականութեանը: Գերմանիան է, որ նորան պայքարի է բաշում: Պատերազմի սկսուելով թիւրքիայի հլու հնազանդութիւնը գերմանական կամքի առաջ օր-աւուր կատարեալ է դառնում: Քանի պայքարն ընդարձակոււմ է և գերման աւագ-սպայակոյտը տեսնում է իւր ռազմական զուգադրութիւնները մէկը միւսի յետևից խոր-

տակումը Ֆրանսիայի, Ռուսաստանի և Անգլիայի նկատմամբ, այնքան նա աւելի ուշադրութեամբ է հետևում և առաւել գնհատութեան արժանացնում իւր արևելեան ձեռնարկութիւնները: Բանալ Համբուրգից մինչև Պարսից ծոցը մի ճանապարհ, իւր տիրապետութեան տակ, կամ իւր հովանաւորութեան և կամ իւր զինակցութեան հետ պահպանել շարէշար Աւստրիան, Հունգարիան, Բալկանեան թերակղզին, Օսմանեան կայսրութիւնը; Եգիպտոսը և Պարսկաստանը,—ահա գերմանական կառավարութեան աչքում այսօր այն միակ շահը, որ նա կարող է ունենալ պատերազմից, միակ հատուցումը, որ ըստ իւր կարծեաց, իրաւունք ունի յուսալու և ստանալու այդչափ զոհաբերութիւններէից յետոյ:

Այսպիսի պայմանների մէջ Գերմանիայի շահն է, որ Հայերն անհետանան, իբրև մի ազգային և քաղաքական բաւական զօրեղ խմբակցութիւն, որոնք յոյս ունին գոնէ մի վարչական ինքնավարութիւն ստանալու:

Ստանալ մի այդպիսի ինքնավարութիւն,—առանց անշատուելու Օսմանեան կայսրութեան ամբողջութիւնից, ընդհակառակն այդ ամբողջական մարմնի մէջ յառաջադիմութեան մի խմոր և քաղաքակրթութեան մի բով դառնալով,—ահա այդ էր, տարիներից ի վեր Հայ ազգի նպատակը: Այդ նպատակը նոյն իսկ Եւրոպան ինքն է մատնացոյց արել, բազմիցս արձանագրելով ազգերի իրաւունքների շարքում Հայկական բարենորոգութիւնները: Պր. Ռընէ Պինսօն, նոյն իսկ հանդիսիս մէջ*), թէ ինչ են այն պահանջները, որ Հայերն ունին և թէ բարձրագոյն Դրան համար մի խոհական քաղաքականութիւն կլինէր այդ պահանջներին զոհացում տալ և այդպիսով իւր ապագան ամրապնդել. նա ապացուցել է նմանապէս, թէ ինչպէս 1912 թուին, Հայ ազգային պատմութեան մէջ էական դէպք տեղի ունեցաւ,—Ռուս կառավարութեան հետ հա-

*) René Pinon: La réorganisation de la Turquie, *տես* Revue des Deux Mondes, 1915 թ. օգոստոս 15.—

մերաշխ գործակցութեան գալու խնդիրը՝ Ռուսական Կովկասեան սահմաններում, էջմիածնում ապրող Հայոց հոգևոր և քաղաքական Պետի, Կաթողիկոսի Նիկոլայ Կայսեր այցելութեամբ խորհրդանիշուելով: 1913 և 1914 թ. թ. ընթացքում Կաթողիկոսի ներկայացուցիչները ընդունել տուին Մեծ-պետութիւններին և նոցա միջոցով յանձնարարել տուին բարձրագոյն Դրան հաւանութեան՝ Հայաբնակ վիլայէթների բարենորոգութիւնների և վարչական կազմակերպութեան մի ծրագիրը՝ Վիլնիւմշտրասէում, երկար տատանումներից յետոյ միայն որոշուեցաւ միանալ Խորհրդարանների միահամուռ համաձայնութեանը և դեռ ևս, պահանջ դրին մի քանի փոփոխութիւնների, որով խեղաթիւրուում էր բարենորոգութիւնների ոգին և նորա ոյժը թուլացնում ու ջլատում: Բ. Դուռը համակերպեց ընդունել բարենորոգումների սկզբունքը, նոյն իսկ երկու կրողացի կառավարիչ ընտրուեցան: Տաճիկ կառավարութիւնը, իւր աւանդական սովորութեան համաձայն, իրեն էր վերապահել զործնականի մէջ ոչնչացնելու՝ իւր մշտական անբարեհաճութեամբ, կիրառութեան ժամանակ այն առանձնաշնորհումները, որ կրողական պետութիւնների համաձայնութիւնն աւելի պահանջի, քան կամաւոր զիջողութեամբ էր դրել նորա վերայ: Տաճիկ կառավարութիւնն սպասում էր այն անխուսափելի բոլորակներ, երբ մեծ Պետութիւնների մէջ ծագած խոշոր անհամաձայնութիւններն իրեն կարածէին ի դերև հանել իւր պարտաւորութիւնները և Հայկական հարցի հետ à la Turque վարուել: Եւ այդ ժամը չուշացաւ հնչելու, մեծ պատերազմի փոզն էր այդ:

Բերլինի Խորհրդարանը սկամայից միայն զիջել էր ընդգրկելու Դուռն քաղաքականութեան մէջ միջամտելու խորհուրդը՝ ի նպաստ ոչ-թիւրք ազգութիւնների, նա երկիւղ էր կրում, որ իւր ձեռնպահութիւնը մի կողմից անգոր կը լինէր դերև հանել խոհական բարենորոգումներ մտցնելու ծրագիրը, որ լուսաւոր թիւրքերից շատ-շատերը փրբև իրենց երկրի և պետութեան փրկութեան անհրա-

Քեշտ մի պայման էին ընդունում, միւս կողմից անխիթ կտար Ռուսաստանին, Ֆրանսիային և Անգլիային օգուտ քաղելով այդ հանգամանքից, նորանոր օրինական շահեր ունենալ, թէ ազդեցութեան և թէ վարկի տեսակէտից: Բերլինի քաղաքականութիւնը տատամսոտ էր: Երբեմն նա շոյում էր Երիտասարդ Թիւրքերի կենդրոնացման քաղաքականութեան կրքերը, երբեմն ազգութիւնների համակրութիւնը գրաւելու փորձեր էր անում, յատկապէս Հայերի համակրութիւնը, որոնց առաջ նա իւր բարեացակամութեան հաւաստիքն էր շոայլում: *) Մի քանի գերմանացի, ինչպէս դօքտօր Լէպսիուսը, — 1895 թուականի Չարզերի պատմութեան յայտնի հեղինակը, — տարուած արդարութեան և համակրութեան ոգով Հայերի նկատմամբ, միւսները նպատակ ունենալով օգտագործելու գերմանական տնտեսական շահերի ընդարձակման գործում վաճառականութեան և առևտուրի գործերի մէջ եփուած մի ազգութիւն, Գերմանիայում հայանպատ մտքերի պատուաստման մի պայքար էին մղում: Սակայն քաղաքագէտներն ու դիւանագէտները, մանաւանդ Կ. Պօլսի մէջ եղածները, յատկապէս գերմանական դեսպան բարօն Wangenheim-ը, հաշտ աչքով չէին նայում այն գործակազմի եղանակին, որ դուր չէր զալիս Երիտասարդ-Թիւրքերի նեղսիրտ և մոլեռանդ ոգուն: «Հայերին ատում ենք մենք», ասում էր, 1914 թ. ամառը, Գերման դեսպանատան մի պաշտօնեայ մի շատ յայտնի Հայ անձնաւորութեան: Հայերը, իրենց լեռների կատարներից, ինչպէս մի բարձրադիր ամբութիւնից, տիրապետում են այն կրճերին և դաշտերին, որոնց միջով առաջանում է Բաղդատի երկաթուղու դիժը. Հայկական լեռնաշղթաները, որոնց առաջ ծառա-

*) Դեռ ևս չէ մոռացուած Goeben-ի նաւապետի այցելութիւնը այդ շրջանում, Ադանայի Հայոց առաջնորդին, իւր ամբողջական պաշտօնական համազգեստով, այն բոպէին, երբ Չարզերի շուէններ էին պտտում. և դեռ թարմ են այն հաւաստիացումները, որ արտայայտեց Հայերին, թէ ամենափոքր վտանգի բոպէին գերմանական նաւազներին ավի կիջեցնէ ի պաշտպանութիւն նոցա:

նում են Ձէյթունի լեռները և Ամանոսի ու Տաւրոսի կատարները, տէր են այն դժուարանցանելի կրճերին, որ տեղից վաճառականութիւնն ու գորքը պէտք է անցնեն և իջնեն Անատոլիայի սարահարթները՝ Սիրիա, Տիգրիսի և Եփրատի հովիտները դիմելու համար: Հիւսիսից, հայաբնակ դաւառները սահմանակից են այլ երկրամասերի, որ նոյնպէս Հայերով է բնակած և որ զտնւում են Ռուսիոյ տիրապետութեան տակ: Հայերին բարենորոգումներ շնորհելով, որ նոցա մէջ աւելի ամբողջական մի ինքնավարութեան ոգին պիտի քաջալերէ, արդեօք ուսական քաղաքականութեան ոյժ տալ չէ՞ նշանակում: Արդեօք աւելի լաւ չէ՞ հովանաւորել «թիւրքացնելու», և կամ Միութեան և Յառաջադիմութեան կոմիտէի կենդրոնացման քաղաքականութիւնը, աշխատել բոլոր ազգերի ի մի ձուլելու ձգտումը գլուխ հանել և նոյն իսկ անունն ու յիշատակը ջնջելու Հայերի ու Արաբների անցեալ անկախութեան յուշերի: Հայաստանը ուղղորդ կանգնած էր՝ գերմանական քաղաքականութեան և տնտեսական շահերի ընդարձական ճանապարհի վերայ, ուստի՝ պէտք էր անհետացնել այն:

Այդ ժամանակն էր, որ գերմանացի յայտնի հրապարակախօս Paul Rohrbach-ը իւր «Բաղդատի Երկաթուղին» գրքոյկի մէջ տուն տուեց այն միտքը և հնարագէտ միջոցը, թէ պէտք է հաշտեցնել իրար հետ այդ երկու միտումը և շահագործել, յօգուտ Գերմանիայի՝ և իւր ձեռնարկութիւնների, Հայերի ունակութիւնները և աշխատանքը, միանգամայն ի չիք դարձնելով քաղաքական այն վտանգը, որ նորա կարծիքով, առաջ կգար Ռուսաստանին հարևան մի Հայաստան ստեղծելով: Նա առաջարկեց տեղահան անել Հայերին, իջեցնել տալ նոցա իրանց լեռներից և նոցանից նորանոր գաղութներ հիմնել՝ Բաղդատի երկաթուղու գծի երկայնութեամբ: Այդպիսով գերմանական երկաթուղու գիծը կանցնէր շատ աւելի հարուստ ու բարեբեր և քաջարուեստ մի երկրի միջով. անապատները կը ծածկուէին առատ հնձի դաշտերով և գիւղերով և «Բաղդատի» բաժնիատէրերը իրենք զիրենք շատ աւելի հանգիստ կգոյային.

այսպիսով Հայերը գերմանական ազդեցութեան ուսովիրայ կդառնային: Բռնութեան ոչ մի հետք և ոչ իսկ հակակրութեան մի նշան դէպի Հայերը չենք գտնում Ռօհրբախի առաջարկութեան մէջ. Հայերն իրենց շահը կգտնէին այդտեղ, ինչպէս և Թիւրքերը, Գերմանացիք էլ իրենցը: Այդ գաղափարն ընդգրկուեցաւ: Եւ մենք կը տեսնենք, թէ Թիւրքերն ինչպէս հասկացան այդ և իւրատեսակ գործադրութեան դրին: Այստեղ իսկ, Տաճկական ոճրագործութեան ծագման պատասխանատուութիւնը գերմանացիներինն է, — եղանակը գերմանական, գործը տաճկական:

Գերմանական շահերը հրաշալի ներդաշնակութիւն էին գտնում տաճկական դարաւոր ատելութեան հետ:

Այստեղ խնդիր չէ կարող լինել նորից վերապատմելու, նոյն իսկ համառօտ ակնարկով, Հայերի և Տաճիկների յարաբերութիւնների տխուր պատմութիւնը: Այդ պատմութիւնը հանրածանօթ է: Տաճկական տիրապետութիւնից առաջ Անատօլիայում ապրող բոլոր ազգութիւններից միմիայն Հայերն են ողջ մնացել: Եւ այդ շնորհիւ միայն իրենց լեռնոտ երկրի հովանաւորութեան, իրենց բեզուն եռանդի, իրենց մտայնութեան: Բայց, ամէն անգամ երբ ծանր յուզումնալից խռովութիւններ տակնուվրայ են արել Օսմանեան Կայսրութիւնը, Հայերն են եղել դոցա զոհերը: Որչափ Թիւրքերի իշխանութիւնը թուլացել է, այնչափ առաւել նոքա անտանելի և հալածող տիրապետողներ են դարձել: Թիւրքերն ատում են Հայերին, վերջիններին կրօնի, մտաւորական գերազանցութեան և աւելի նուրբ քաղաքակրթութեան ընդունակութեան համար, ինչպէս և նոցա վաճառականութեան հմտութեան և շահարեւ արուեստների ունակութեան պատճառով: Հայր, ծոյլ ու պարապօրտ Թիւրքի, ինչպէս և թափառական և աւազակ Քիւրդի համար բնութիւնից նախասահմանուած մի որս է, որին երբ կամենայ աչք կարող է ձգել. հէնց որ գայմազամը կամ զինայրը (gendarme) մի նշան տան կամ աչք գոցեն՝ ցոփութեան և անզուսպ անկարգութեան օրերն սկսում են, — կողոպուտ,

առևանգում, բռնաբարութիւն, ջարդ՝ իսկոյն պատրաստ են:

Ամենքին յայսնի է 1895—1896 թ. թ. ջարդերը: Հազիւ զոհերի արիւնը ցամաքել էր սկսած՝ այրուած, հրդեհուած եկեղեցիների մոխիրները հազիւ էին սառել, երբ Վիլհելմ II ձեռնարկում է իւր թատրոնական և արգասաւէտ ճանապարհորդութիւնը դէպի Պաղեստին և Կ. Պօլիս, իւր կայսերական աջի մէջ էր առնում իւր «բարեկամ» Սուլթան Համիդի ձեռքը և Դամասկոսում ինքն իրեն մուսուլմանների հովանաւոր էր հրատարակում:

Հայաստանն, ըստ իւր վաղնջենի համակերպութեան և իւր աւանդական եռանդի շնորհիւ, սկսում էր շունչ քաշել և նորից գործի ձեռնարկել, երբ վերայ հասաւ 1908 թ. յեղափոխութիւնը, Երիտասարդ-թիւրքերը, — պարտք ենք համարում յիշեցնել, — չարին այդ բանն առանց Հայկական Կօմիտէների հետ նախնական համաձայնութեան և կատարեալ համերաշխութեան դալու ապագայ ծրագիրների նկատմամբ: Յեղափոխութիւնը պէտք է սկիզբ դնէր օրէնքի և ազատութեան թագաւորութեան: Հայերը նոր կարգերը հրճուանքով ընդունեցին, լի մեծամեծ յոյսերով ապագայի նկատմամբ. նոքա ենթադրում էին, թէ առաւել բաղդաւոր օրերի արշալոյս է ծագում, ուր գոյութիւն կունենան, — այդ վերածնուած Օսմանեան կայսրութեան մէջ, — առանց կրօնի և ազգութեան խտրութեան՝ իբրև Սուլթանի հաւատարիմ հպատակներ: Նոցա երազածները շուտով չբացան: Երիտասարդ-թիւրքերի վարչականութիւնը, ընդգրկեց առաջին իսկ քայլերից մի յախուռն, բացառապէս մուսուլման, կենտրոնացնող և թիւրք քաղաքականութիւն: Գերմանիան չքաշուեց մղել նորան այդ ուղիով, որովհետև ազատամիտ քաղաքականութիւնը պիտի մղէր թիւրքիային բարեկամական կասկեր հաստատելու միաժամանակ և Ֆրանսիայի և Անգլիայի հետ. նա հաւաստիացրեց թիւրքիային թէ նորան շատ մօտալուտ մի մեծ վտանգ է սպառնում Ռուսաստանի կողմից, կարճեա այդպիսի վտանգի առաջն առնելու հնարն այն չէր լինի, որ թիւրքիան Ռուսաստանի և Անգլիայի հետ ամենա-

մօտ և սերտ բարեկամութիւն հաստատէր: Ազանայի Չարդերը, որոնց ամբողջ պատասխանատուութիւնն ընկնում է Երիտասարդ-Թիւրքերի վերայ, այն վճռական գործողութիւնն է, որ բնորոշում է նոցա քաղաքականութիւնը, որ Համիդեան վարչութեան եղանակից աւելի ճշտող ու բռնակալ էր: Արդիւ-Համիդի օրով իսկ գործադրող Սայիդ փաշայի ծրագիրը, թէ «Հայկական հարցը կլուծենք Հայերին բնաջինջ անելով», դարձաւ Միութեան և Յառաջադիմութեան խմբակի ծրագիրը: Այդ կոմիտէի ազդեցիկ անդամներից մէկի, դօքտօր Նազիմի երազանքները, Թիւրքերը Օսմանեան կայսրութեան և բոսնական բաժնի գնով վճարեցին: Այդ անուղղայ երազասեօը (utopiste) երեւեայում էր, թէ մարդիկ աւելի հեշտութեամբ արմատախիլ կլինեն, քան ծառերը. նորա ծրագիրն էր, թէ Մակեդոնիան պէտք է դատարկել իւր ազգաբնակչութիւնից և նորա փոխարէն Թիւրք տարրն ուժեղացնել այնտեղ՝ Բոսնիայից բերած մոհաջիրներ (ղաղթականներ) բնակեցնելով, որ և պատճառ դարձաւ Բալկանեան դաշնակցութեան կազմակերպուելուն և 1912 թուականի տաճկական ազէտն առաջ բերեց: Դա այն տեսակի ըմբռնումներից էր (conception), որպիսի ըմբռնումներից մէկով սկիզբ դրուեց Հայերի Անատոլիայից դուրս վճռելու ծրագրին: Եւ այսպէս այն յեղափոխութիւնը, որ կատարուեցաւ «քաղաքական ազատագրութեան, ազգերի և կրօնների հաւասարութեան» աղմուկների տակ, վերջացաւ համիսլամութեան և Թիւրքացնելու քաղաքականութեամբ. այդ բոլորից սկսած, յուսահատութեան մղուած սոց-Թիւրք տարրերին ոչինչ չէր մնում, բայց եթէ կամ կենցաղի պայմանները փոխել տալու միջոցներ որոնել, կամ ազատուել քմահաճոյքներից մի վարչութեան, որը թագնուած մի ողորմելի և ապուշ ինքնակալի և մի հլու հնազանդ Խորհրդարանի յետեր, խղճմտանքից զուրկ, փառախնդիր և անամօթ զօշաքաղնների մի ընկերշակութեան կատարեալ մեփականութիւնն էր դարձել:

Երբ վրայ հասաւ Մեծ-Պատերազմը, ոչ միայն Օսմանեան կայսրութեան սոց-Թիւրք ազգաբնակչութիւնը, այլ և նոյն

իսկ Թիւրքերի մի ահագին մեծամասնութիւն յոյս ունէր, թէ մի նոր, աւելի ազատամիտ, անկուսակցական, և օտար-նեցի կամքին աւելի քիչ հլու-հնազանդ մի վարչութիւն կը տեսնէր գործի գլուխ անցած: Թիւրքերի մեծամասնութեան ըղձերի և ցանկութեան հակառակ էր, որ կառավարութիւնը, կամ աւելի շուտ էնվէր-փաշան, Գերմանիայի հրամանները կատարելով, Թիւրքիան զահավիժօրէն ևրոպական պայ-քարի մէջ նետեց:

Բ.

1914 թ. Օգոստոսի մեծ անցքերը վրայ հասնելու բոպէին Օսմանեան կայսրութեան մէջ ապրող Հայերը բոլորովին յուսախար էին. Երիտասարդ-Թիւրքերից իրենց վերջին յոյսը բոլորովին կտրած կարծում էին, թէ մի աւելի ազատամիտ վարչական կազմ կը գտնեն և անձկութեամբ իրենք իրենց հարց էին տալիս, արդեօք ստիպուած չպիտի լինէին ի մօտոյ իրենց ազատագրութիւնն ու փրկութիւնը դրօշից յուսալու: 1909 թ. Ադանայի կոտորածից յետոյ, Հայաստանը երբէք կատարեալ անդորրութիւն չէր տեսած: 1912—1913 թ. թ., Բալկանեան պատերազմի շրջանում, այնտեղ դաժան վերաբերմունքի մի գաղտնի հալածանք էր տիրում, — կողոպտել, սպանութիւններ, բռնի կրօնափոխութիւն, կանանց առևանգում, աղջիկների բռնաբարում՝ յաճախակի, թէև ոչ համատարած, երևոյթներ էին: Պրանսիական և Անգղիական զիւանագիտութեան եռանդուն զիմուժները, Ռուսիայի սպառնական միջամտութիւնը արգելք հանդիսացան կոտորածների համատարած բնոյթ ստանալուն: Ամեն անգամ, երբ խնդիրը ջարդերին է վերաբերում, — ապացոյցները բազմաթիւ են, — Գ. Պօլսի հրամանները միշտ ամենայն ճշգրութեամբ են կատարուել. հետևաբար վարչչների պատասխանատուութիւնը աներկբայ է և կատարեալ: Երբեմն երաժիշտների խմբի եռանդը կարող է ընդ-վզել խմբապետի ցանկութիւնը, սակայն երբէք առանց նորա տուած նշանի գործ չեն սկսում: Ձէյթունցիները՝

որոնք Բալկանեան պատերազմի օրերին քաշուել էին իրենց լեռները՝ զինուորացուներ շտալու համար, այդ ժամանակից ի վեր ապրում էին այնտեղ կիսանկախ վիճակի մէջ: Բազմաթիւ նշաններից երևում էր, որ Երիտասարդ-Թիւրքերի ոգու մէջ Հայերի կործանումը որոշուած խնդիր էր և որ առաջին պատեհ առիթին զործադրութիւն կատանար:

Օգոստոսին, պատերազմը յայտարարելուց անմիջապէս յետոյ, մանաւանդ Կ. Պօլսում եղած և միւս մեծ քաղաքների մէջ ապրող Հայերի, ինչպէս և Օսմանեան կայսրութեան սահմաններից դուրս ապրող ամբողջ Հայութեան կատարեալ համակրութիւնը Փրանսիացիների, Ռուսների և Անգղիացիների կողմն էր: Հայ բարձր շրջանի անհատները Ֆրանսիական կամ անգղիական կրթութեան տէր անձնաւորութիւններ են. դոցանից բաւական մեծաքանակ մի բազմութիւն՝ Կ. Պօլսից, և ուրիշ քաղաքներից ինչպէս և Ամերիկայից եկան կամաւոր մտնելու Ֆրանսիական դրօշի տակ: Թիւրքիան դեռ ևս պատերազմող կողմ չէր. դալ և ազատութեան բարեկամների բանակի մէջ կամաւոր գրուել, ինչպէս և դարերով Թիւրքիային բարեկամ Ֆրանսիացիների շարքերում պատերազմելու հանգամանքը մի շատ բնական բան էր և կարող միայն անհաճոյ լինել գերմանացիներին: Թիւրքիայի հպատակ ուրիշ ազգութիւններ ևս, ինչպէս Արաբներ, Սիրիացիք, Հրէաներ եկան և Ֆրանսիական շարքերի մէջ մտան պատերազմելու ազգերի իրաւունքների և ազատագրութեան համար: Եւ երբ Գերմանիայի կամքով Թիւրքիան պայքարի ծոցը նետուեց, ոչ միայն Հայերը և ոչ-Թիւրք ազգութիւնները, այլ նոյն իսկ բազմաթիւ Թիւրք հայրենասէրներ՝ «սաստիկ վիշտ զգացին այդ առթիւ: Կովկասեան սահմաններում ապրող, 1895 թ. կոտորածից ի վեր Ռուսական երկրի մէջ ապաստան գտած, Հայերը խմբերով խնդիր յարուցին մտնելու Յարի զօրքերի շարքը և կամաւորների ու ղիտազօրի (éclaireurs) խմբեր կազմեցին իրենց ճնշուած և հարստահարուած եղբայրների ազատագրութեան համար մաքառելու: Օսմանեան կայսրութեան Հայերը զլսիկոր և ճնշուած հոգով, սակայն հաւատարմու-

Թեան վիճակի մէջ մնացին: Նոքա, առանց տրտունջի, կամս-
 վին Թողեցին որ կառավարութիւնն իրենց կողոպտէ, Թիւրք
 կառավարութիւնը նոցանից եռապատիկ աւելի դրամական
 տուգանքներ էր կորզում, քան նոքա պարտաւոր էին վճարելու
 ըստ օրինի: Պատերազմի դաշտը լքողների և դասալիքների
 թիւը շատ քիչ էր, թէև կառավարութեան ձեռք առած մի-
 ջոցները, Հայերի նկատմամբ, ապօրինի և հարստահարիչ էր:
 Օրէնքով քրիստոնեայ ազգութիւններից, զինուորագրու-
 թեան էին կանչուում, քսանից մինչ երեսուն և հինգ տարե-
 կանները. արդ, կամայական մի միջոցի շնորհիւ, — որ ըստ ին-
 քեան երեւան է հանում կանխորոշ մի մտադրութեան գոյու-
 թիւնը, այն է հայ ժողովուրդը զրկել պիտանի տղամարդիկ-
 ներից և ապա առանց զիմադրութեան բնաջինջ անել նոցա, —
 տասն և ութ տարեկանից մինչև քառասուն և հինգ տարեկան
 Հայերը անխտիր զինուորագրուեցան: Մոցանից կազմուեցան
 աշխատաւոր-բանուորների գնդեր, որոնց զէնք չբաժանուե-
 ցաւ, սակայն դատապարտուեցան ամենածանր աշխատանք-
 ների, ենթակայ ծայրահեղ նախատինքի և բիրտ վարմունքի
 իրենց թիւրք մեծաւորների և ընկերների կողմից. դժուար էր
 ասել, թէ այդ թշուառ արարածները զինուորնե՞ր էին ար-
 դեօք, որ կոչուած էին պաշտպանելու մի հայրենիք, որ ոչինչ
 չէր արել նոցա վստահութիւնը գրաւելու համար. թէ պա-
 տանդներ և կամ դատապարտեալներ: Տաճիկ մամուլը մի
 արշաւանք սկսեց Հայերի դէմ՝ մեղադրելով նոցա զաւա-
 ճանութեան, լրտեսութեան և ապստամբութեան մէջ:
 Նոցա կանխորոշ, միտումաւոր դատի էին քաշում: «Հայերի
 զէմքը զրութեան և բոպէի օղաչափն է, զրում էր Գա-
 րագեօզը. եթէ փայլում է, կնշանակէ Դաշնակիցների գոր-
 ծերը լաւ են. եթէ մռայլ է, կնշանակէ բաններն անյա-
 ջող է»: Կամաց-կամաց մտքեր էին պատրաստում այն
 արհաւիրք-ողբերգութիւնների համար, որ կայսրութիւնը
 պիտի արիւնով ողողէր:

Չնայելով այդ բոլոր տազնապայոյզ ազդանիշերին և
 կամայականութիւններին, Հայաստանում ապստամբու-
 թիւն չծագեց: Բայց երբ Ռուսներն անցան իրենց սահ-

Թեան վիճակի մէջ մնացին: Նորա, առանց տրտունջի, կամս-
 վին Թողեցին որ կառավարութիւնն իրենց կողոպտէ, Թիւրք
 կառավարութիւնը նոցանից եռապատիկ աւելի դրամական
 տուգանքներ էր կորզում, քան նորա պարտաւոր էին վճարելու
 ըստ օրինի: Պատերազմի դաշտը լքողների և դասալիքների
 թիւը շատ քիչ էր, թէև կառավարութեան ձեռք առած մի-
 ջոցները, Հայերի նկատմամբ, ապօրինի և հարստահարիչ էր:
 Օրէնքով քրիստոնեայ ազգութիւններից, զինուորագրու-
 թեան էին կանչուում, քսանից մինչ երեսուն և հինգ տարե-
 կանները. արդ, կամայական մի միջոցի շնորհիւ, — որ ըստ ին-
 քեան երեւան է հանում կանխորոշ մի մտադրութեան գոյու-
 թիւնը, այն է հայ ժողովուրդը զրկել պիտանի տղամարդիկ-
 ներից և ապա առանց զիմադրութեան բնաջինջ անել նոցա, —
 տասն և ութ տարեկանից մինչև քառասուն և հինգ տարեկան
 Հայերը անխտիր զինուորագրուեցան: Մոցանից կազմուեցան
 աշխատաւոր-բանուորների գնդեր, որոնց զէնք չբաժանուե-
 ցաւ, սակայն դատապարտուեցան ամենածանր աշխատանք-
 ների, ենթակայ ծայրահեղ նախատինքի և բիրտ վարմունքի
 իրենց թիւրք մեծաւորների և ընկերների կողմից. դժուար էր
 ասել, թէ այդ թշուառ արարածները զինուորնե՞ր էին ար-
 դեօք, որ կոչուած էին պաշտպանելու մի հայրենիք, որ ոչինչ
 չէր արել նոցա վստահութիւնը գրաւելու համար, թէ պա-
 տանդներ և կամ դատապարտեալներ: Տաճիկ մամուլը մի
 արշաւանք սկսեց Հայերի դէմ՝ մեղադրելով նոցա դաւա-
 ճանութեան, լրտեսութեան և ապստամբութեան մէջ:
 Նոցա կանխորոշ, միտումաւոր դատի էին քաշում: «Հայերի
 զէմքը զրութեան և բոպէի օղաչափն է, զրում էր Գա-
 րազեօզը. եթէ փայլում է, կնշանակէ Դաշնակիցների գոր-
 ծերը լաւ են. եթէ մռայլ է, կնշանակէ բաններն անյա-
 ջող է»: Կամաց-կամաց մտքեր էին պատրաստում այն
 արհաւիրք-ողբերգութիւնների համար, որ կայսրութիւնը
 պիտի արիւնով ողողէր:

Չնայելով այդ բոլոր տազնապայոյզ ազդանիշերին և
 կամայականութիւններին, Հայաստանում ապստամբու-
 թիւն չծագեց: Բայց երբ Ռուսներն անցան իրենց սահ-

իրաւական ինքնապաշտպանութիւնը, արեան գետերի մէջ խեղդուեցան. 1914 թ. դեկտեմբերից մինչև 1915 թ. մարտ ամիսը հարիւրաւոր զիւղեր, գլխաւորապէս Ռուս-Տաճկական և Պարս-Տաճկական սահմանագծի վերայ, աւերի և հրդեհի մատնուեցան. ամեն տեսակ խժոճութիւն ու անգթութիւն կատարուեցաւ Գերման սպաների աչքի առաջ և նոցա համաձայնութեամբ:

Այստեղ, այժմ, դժուար է ճշդել պատասխանատուութեան չափերն ու որակը: Առաջին ջարդերն սկսուեցան ընդդիմադրութեան հանդիպելուց առաջ, թէ յետոյ, շատ դժուար է որոշել: Անց ու դարձի այդ երկու շարքը շատ սերտ են հիւսուած իրար և շաղկապուած. թէ մէկը և թէ միւսն այնքան յանկարծական են եղել դժբաղդ Հայաստանի հողի վերայ, որ պատմութիւնը դժուարութեամբ պիտի որոշէ: Քսան տարուց ի վեր այդ երկրում միշտ էլ եղել են Գիւրդեր ու Տաճիկներ, որ սպանում, կողոպտում, առևանգում ու բռնաբարում են Հայերին. ապրել են և Հայեր, որ մէջ ընդ մէջ, փորձում են պաշտպանուել. այնտեղ միայն օրէնքն է որ չէ ապրել և անծանօթ է եղել: Ոչ ոքի մտքով իսկ չի անցնիլ մեղադրել Հայերին, որ նոքա երբեմնակի և որոշ վայրերում փորձել են դահիճներին կանխել. ոչ ոք չի դատապարտիլ և թիւրքերին, որ ահռելի պատերազմի բռնուած բոլորին, նոյն իսկ ամենախստազոյն միջոցներով ճնշել են ապստամբութիւնը, որ նոցա թշնամիների յաղթական գնացքին յաջողութիւն պիտի տար: Բայց շատ մեծ տարբերութիւն կայ ապստամբութեան անգութ ճնշման միջոցների և մի անմեղ ազգի բարբարոսական եղանակով ու դիտաւորեալ բնաջնջման մէջ:

Երիտասարդ թիւրքերը միայն մի յաջող դէպքի էին սպասում իրենց եղեռնաւոր մտադրութիւնն իրագործելու: Սահմանագծի վերայ տեղի ունեցող դէպքերը պատշաճ առիթներ էին. դաշնակիցների Դարդանէլը պաշարելու և նորա դէմ մղած պայքարն ու ժամը ամենայարմար բոլորէն համարուեցաւ այդ մտադրութիւնն իրագործելու համար: Մայիսի 20-ի (յուլիս 2, ճ. տ.) հրովարտակով հրաման

տրուեցաւ Հայերին միահաղոյն Միջագետք գաղթեցնելու:

Նինուէի բարձրաքանդակների վերայ, որ ներկայացնում է Սարգոնների կամ Ասուր-Բանիրայների սիրազոր-ծուծիւններն ու յաղթանակները, տեսնուում են յաղթուած ազգութիւնների խղճուկ հօտեր, շղթայուած և դէպի յաղթողների պալատները գերի վարուող անհատներ. մըտ-րակաները ձեռքն առած Ասորի հեծեալ զօրականներ առաջ են քշում այդ մարդկային հօտերը, ձեռքերին եղած նի-զակաները մխում են նոցա մարմինն ու սիրտը, ոմանք խու-սափում են հարուածներից և ընկածներին ձիերի ոտքերի տակն են տալիս. նոքա, որոնք հասել են իրենց ճանապարհորդութեան վերջին կէտին՝ մորթուում և կամ գերի են վա-ճառուում: Այսպէս էր երբեմն Բաբելոն գերի տարուող Իսրայէլի ժողովրդի վիճակը: Այդ օրերը վերականգնանացել են: Հայերի հայրենիքից արտագաղթը, — մանուկ, կանայք, տղամարդիկ, ծերեր, — միմիայն մի կեղծ ու պատիր դիմակի տակ թագ-նուած որոշումն էր: Տեղն ու տեղը կոտորածների ոճիրը շատ աւելի մարդկային կլինէր և նորանոր սարսափելի տանջանքների նոր մի շարք չէր ստեղծիլ:

Դէպքերն ամէն տեղ, համարեա, նոյնութեամբ են կրկնուում: Նախ, Հայ անգէն զինուորներն են կոտորածի զոհ գնում իրենց զինակից զինուած տաճիկ ընկերների կողմից, — հարիւրներով, հազարներով այդ դժբաղդ զոհե-րը տարուում են որ և է խուլ անկիւն և հրացանի բռնուում: Որոնց կեանքը խնայուել է, նոքա ևս մատնուում են ամե-նադառն աշխատանքների և, փոքր առ փոքր, բնաջինջ լի-նում: Հառնում է քաղաքների և գիւղերի արտագաղթի հրամանը, — յայտարարուում է և, սովորաբար, յամուրդի (délai) ո՛չ մի օր չէ տրուում: Հայերն իրաւունք չունեն իրենց ինչքն ու ունեցածն առնել հետները, երբեմն ար-տօնուում է ծախսել ամենաչնչին գներով. որոնց յաջող-ւում է մի քանի փարա ստանալ, այդ դրամն էլ շատ հեռու չէ տարուում: — զինուոր, զինայր (gendarme), Թիւրք, Քիւրդ ինչպէս սոված գայլերի վոհմականեր, յարձակուում են այդ յուղարկաւոր խմբերի վերայ և յափշտակում և այդ

վերջին մնացորդները կողոպտում են ամեն ինչ, որ ամենաչնչին արժէք կարող է ունենալ. ծերերն ու պառաւները սպանւում են կամ մահանում քաղցից և կամ յոգնածութիւնից. մանկամարդ կանայք և մատաղ կոյսերը ուժով տարւում են թիւրքերի հարեմները և կամ զինուորների կրքերին են բաւականութիւն տալիս, փոքրահասակ մանուկները խլւում են մայրերի գրկից ու ձեռքերից և միւսիւրմաններին տրւում: Զինուորների և զինայրերի անյագ և վայրենի կողոպուտից մնացածները Քիւրդերն են թալանում, սպանում և լլկում: Այդ սրտմաշուք կարաւանի շարքերը շատ հեռուները չեն գնում—հրացանը, սուխը, եսթաղանը և քաղցն իրենց գործն են տեսնում և գնացորդների շարքերը լափում: Մարդ-գազանի ամենավայրագ և ստոր ու զգուելի կրքերն այդ դժբաղդ, հիւժուած մարդկային կերպարանք կրող հօտի վերայ են փորձւում ու ի կատար ածւում: Եւ այդ խղճուկ արարածների կոյտը հալւում, անհետանում է: Եւ եթէ մի քանի չնչին բեկորներ մինչև Միջագետք են հասնում, այնտեղ ևս մնում են երեսի վերայ ձգուած՝ անպատուար, առանց սնունդի, հագուատի՝ անապատի և ճահիճների այդ աշխարհում շոգը և խոնաւութիւնը միացած լեռնային մաքուր և առողջ օդի սովոր մարդիկներին ճանճերի պէս են կոտորում: Անհնար է որ և է գաղութ հիմնել, առանց էական-կենսական միջոցների, գործիքների, օգնութեան, ձեռնտութեան և առողջակազմ անհատների,—ուստի և Հայ մարդկային հօտերի վերջին մնացորդներն ևս իրենց վերջն են գտնում տենդի և թշուառութեան երեսից:

Այս արհաւիրքների և սոսկումների տեսարաններն աւելի լաւ է թողնել նկարագրելու ականատես վկաններին: Ահա, նախ, Հայաստանից ստացած մի վաւերագրի քաղաւածները, որ փաստերի և անցած-դարձածի մի սովորական արտայայտութիւն է, գրուած չոր ու ցամաք, համարեա պաշտօնական գրութեան լեզուով:

«Մօտ մի միլիոն Հայ, որ բնակւում էին զանազան գաւառներում, դուրս են քշուած իրենց հայրենիքից և

աքսորուած դէպի Հարաւ: Այդ արտագաղթերը կազմակերպուած են եղել տեղական իշխանութիւնների ձեռքով որոշ նախագծով և նպատակով, սկսուած Ապրիլ ամսի օկգբից: Նախ բոլոր գիւղերի և քաղաքների Հայ ազգաբնակիւթիւնը զինաթափ է արուած զինուորների և զինայրերի ձեռքով, ինչպէս և ոճրադատատեանների միջոցով, որոնք բանտերի դռները լայն բանալ տուին այդ նպատակով և, զինաթափի պատրուակի տակ, սպանութիւններ և ամէն տեսակի զարհուրելի տանջանքներ էին գործել տալիս: Ապա, խմբերով բանտ էին ուղարկում Հայերին, իբր թէ նոցա մօտ գտնուել են կամ զէնք, կամ զբքեր և կամ կուսակցութեան մի անդամի անուն. եթէ այդ էլ չլինէր, հարստութիւնը կամ հասարակական որ և է դիրքի տէր լինելը բաւարար առիթ էր դորա համար: Եւ ապա ձեռնարկեցին արտագաղթի գործը: Առաջ և առաջ, աքսոր ուղարկելու պատրուակով, դուրս քշուեցան նոքա, որոնք բանտարկուած չէին և կամ որոնց վերայ մեղք չգտնելու պատճառով բանտից ազատ էին արձակուած: Ապա նոցա կոտորեցին: Վերջիններից ոչ ոք մահից չէ ազատուել: Գաղթելուց առաջ, տեղական իշխանութիւնը պաշտօնապէս խուզարկում էր նոցա և խլում ամեն տեսակի իր և զբամ: Նոքա, սովորաբար, կապուած էին անհատապէս կամ խումբ-խումբ, հինգ-տասը միասին, Մնացորդը — կին, աղջիկ, ծեր և մանուկներ, նկատուեցան իբր աւար և միւսիւլման ամբօխի տրամադրութեան տակ զրուեցան. պետական ամենաբարձր պաշտօնեան, ինչպէս և վերջին գուհիկ զիւղացին, ընտրում և տանում էին իրենց դուր եկած կնոջն ու աղջկան, պահում իբրև կին և բռնի մահամեղականացնում: Իւրաքանչիւր միւսիւլման տանում էր այնքան փոքր երեխայ, որքան սիրտը կուզէր. դորանից յետոյ մնացածներին ճանապարհ էին դնում քաղցած և առանց ուտեստի՝ ճանապարհին քաղցի, եթէ ոչ արիւնկղակ խմբերի, զոհ լինելու համար: Այդպէս էր Խարբերդի մէջ: Տիգրանակերտի շրջանում, մասնաւորապէս Մարդինում, Չարգեցին Հայերին և ժողովուրդը ենթարկուեցաւ նոյն խժդժութիւններին:

«Էրզրուժի, Բիթլիսի, Սըվազի և Տիգրանակերտի նահանգներում տեղական իշխանութիւնները դիւրութիւններ են տուել գաղթականներին,— Տինգից տասն օր ժամանակ, կայքի և ունեցածի մասնակի վաճառումն կատարելու համար և մի քանի ընտանիքների նոյն իսկ փոխադրութեան սայլեր վարձելու արտօնութիւն են տուել, սակայն, տեղահան լինելուց մի քանի օր յետոյ սայլապանները թողնում էին նոցա կէս-ճանապարհին և իրենք քաղաք վերադառնում: Այդ ձևով կազմակերպուած կարաւանները, հետեւեալ օրը կամ մի քանի օր անց, հանդիպում էին միւսիւլման աւազակախմբերի կամ զիւղացիների, որոնք դոցա ոտքից գլուխ կողոպտում էին: Աւեզակախմբերը միացած զինայրերի հետ սպանում էին այն հատուկ կենդ տղամարդոց կամ երիտասարդներին, որ մնացել էին կարաւանների մէջ: Յափշտակում էին կանանց, առեանգում մանկահաս կոյսերին, մանուկներին և թողնում միայն պառաւներին, որ մտրակի հարուածների տակ առաջ էին քշւում և քաղցից ու ծարաւից կէս ճանապարհին մահանում: Ականատես մի վկայ պատմում է, որ Էրզրուժից և շրջակայքից հանուած կանանց թողել էին Խարբերդի դաշտում, ուր ամենքն ևս կոտորուել են քաղցից (օրական քառասուն—յիսուն հոգի) և տեղական իշխանութիւնը միմիայն ուղարկել է մի քանի մարդ, որ նոցա թաղեն, որպէսզի չլինի թէ միւսիւլման ազգաբնակութեան ասողջութիւնը վտանգի ենթարկուի:

«Մի փոքրիկ աղջիկ պատմում է, թէ երբ Մարզուանի, Ամասիայի և Թոքթի ազգաբնակութիւնը հասել էր Սարը-Ղալա (Սըվազի և Կեոսրիայի մէջ), նոյն իսկ նահանգապետի առաջ խլեցին մանուկներին մօր ստնքից և ձեռքերից, փակեցին մի տան մէջ և մնացածներին ստիպեցին շարունակել ճանապարհը. ապա յայտնեցին մօտակայ զիւղացիներին, որ ուզեցողը կարող է գալ և ըստ իւր ընտրութեան տանել ում և քանիսը կամենայ, իրեն և իւր ընկերուհուն յափշտակեց մի թիւրք սպայ և տարաւ իւր տունը: Կանանց և երեխաների կարաւանների ցոյց են հանւում իւրաքանչիւր իշխանաւորի առաջ, որպէս զի

հասած վայրերի միւսիւլմաններն իրենց ընտրութիւններն անեն և հաւանածներին տանեն: Այդպիսով Բարբերդից ելած Հայ ժողովրդի կարաւանը հալուելով հալուում էր ճանապարհներին, մինչև որ վերջապէս Երզնկայի դիմաց, Քնացած կանայք և երեխաները Եփրատը լցուեցան ուժով և խեղդուեցան:

«... Այդ բարբարոսութիւններն ամեն տեղ են կատարուած և այդ գաւառների ճանապարհորդներն իրենց անցած բոլոր ճանապարհների վերայ միմիայն Հայերի հազարաւոր դիակների էին հանդիպում: Մալաթիայից Սըվազ գնացող մի թիւրք ճանապարհորդ, որ տեւել է ամբողջ իննը ժամ, ճանապարհին բացի հայ կանանց, տղամարդոց և երեխաների դիակներից ոչ ոքի չէ հանդիպել: Մալաթիայում եղած բոլոր արուները դուրս են հանուած դաշտը և կոտորուած, իսկ կանայք և երեխաները, ամենքն ևս, միւսիւլման են դարձրած: Օսմանեան Խորհրդարանի հայ պատգամաւորներ՝ Զոհրարն ու Վարդգէսը, որ Տիգրանակերտ էին ուղարկուած այդտեղ Պատերազմական Դատի ենթարկուելու համար, մինչև տեղ հասնելը՝ սպանուեցան Հալէպի մօտ:

Նոյն վիճակին են ենթարկուել և Հայ զինուորները. նոքա ամենքը զինափաթ էին եղած և ճանապարհների շինութեան վերայ էին աշխատում: Հաստատ աղբիւրից գիտենք, որ Կարնոյ շրջանի Հայ զինուորները, որ բանում էին Կարին-Երզնկայ ճանապարհի վերայ, ամենքն ևս կոտորուած են: Միայն Խարբերդից 1800 երիտասարդ Հայ ուղարկուած են Տիգրանակերտ իբրև զինուոր այնտեղ, ճանապարհների վերայ աշխատելու. ամենքն ևս, առանց բացառութեան, Արդանայի մօտ ջարդուեցան: Միւս վայրերի մասին ոչ մի տեղեկութիւն չկայ, սակայն պարզ է, որ նոքա ևս նոյն վիճակին են ենթարկուած:

Ձանազան քաղաքներում, որտեղ Հայերը մոռացուել-Քնացել էին բանտերի որջերում, հանուեցան և կախուեցան: Մի ամսուայ ընթացքում միայն Կեսարիայում, մի քանի տասնեակ Հայ են կախել: Շատ տեղեր, Հայ ազգա-

բնակութիւնը կեանքն ազատելու նպատակով, կամեցել է միւսիւլմանութիւն ընդունել, սակայն այդ բանակցութիւնները հեշտութեամբ չեն ընդունուել, ինչպէս նախորդ մեծ ջարդերի ժամանակ: Սվաղում, միւսիւլմանութիւն ընդունել ցանկացողներին առաջարկեցին,—տալ իրենց փոքրերին, մինչև տասներկու տարեկան հասակը, կառավարութեան, որ նոցա կտեղաւորէ որբանոցներում և իրենք ելնեն ու գնան այն վայրերն, որ կառավարութիւնը կորոշէ նոցա համար:

«Խորքերդում տղամարդոց միւսիւլման լինելու հարցը չէ ընդունուած. կանանց նկատմամբ, պահանջուել է, որ միւսիւլման դառնալ կարող են նոքա, որին որ և է միւսիւլման կտանէ իւր մօտ և իրր կին կպահէ: Հայ կանանցից շատ-շատերը գերադաս են համարել իրենց ծծկեր երեխաների հետ Եփրատն ընկնել և կամ իրենք իրենց ձեռքով են մահացրել: Եփրատն ու Տիգրիսը հաղարաւոր Հայերի գերեզման է դարձել:

«Նոքա, որ Սև-ծովի ծովափնեայ քաղաքներում են ապրելիս եղել ինչպէս Տրապիզոն, Սամսոն, Կերասուն, ևն. և միւսիւլմանութիւն են ընդունել, ուղարկուած են երկրի ներքին գաւառների այն քաղաքները, որոնց ազգաբնակութիւնը զուտ մահմետական է: Շարին-Կարա-Հիւսարը, որ ընդդիմադրութիւն էր ցոյց տուել զինաթափութեան և արտագաղթի ժամանակ, ումրակոծութեան է ենթարկուած և ամբողջ ազգաբնակութիւնը, թէ քաղաքում և թէ դաշտի գիւղերինը, նոյն իսկ առաջնորդը, անողորմ տանջանքներով նահատակուել են:

«Վերջապէս, Սամսոնից սկսած մինչև Տիգրանակերտ՝ չ'է մի Հայ այսօր գոյութիւն չունի: Մեծամասնութիւնը զոհ է գնացած ջարդերի, մի մասը առեւանգուած է և թաղցրած և միւս մասը մահմետականացրած:

(Շարունակելի)

Թրգվ. Տիրայր վարդապետ